Հավելված N 1
ՀՀ կառավարության 2011 թ.
հոկտեմբերի 6-ի նիստի N 39
արձանագրային որոշման

Պ Ա Յ Մ Ա Ն Ա Գ Ի Ր

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԵՎ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՕՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ

_____ _____
կնքման վայրը կնքման ամսաթիվը

Ղեկավարվելով «Հասարակության և պետության կարիքների համար սեփականության օտարման մասին» ՀՀ օրենքով և ՀՀ կառավարության կողմից ____ -ին ընդունված թիվ ___, ____ -ին ընդունված թիվ ___ և ____ -ին ընդունված թիվ ___ որոշումներով՝ ստորև նշված ՁԵՌՔ ԲԵՐՈՂԸ մի կողմից և ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԻՆՔ մյուս կողմից կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

1. Սահմանումներ

1.1. **ՊԱՅՄԱՆԱԳԻՐ**՝ սույն պայմանագիրը

1.2. **ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔ**՝ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ առարկա հանդիսացող անշարժ գույքը (սեփականության իրավունքի գրանցման վկայական(ներ) թիվ _____), որը կազմված է _____ մարզ, գ._____-ում գտնվող ___ ք.մ. ընդհանուր մակերեսով հողատարածքի (կադաստրային կոդ _____) մասը կազմող ____ք.մ մակերեսով հողակտորը և նույն հողակտորի վրա գտնվող _____-ից, և որի նկատմամբ, համաձայն ՀՀ կառավարության կողմից ____ -ին ընդունված թիվ ___, ____ -ին ընդունված թիվ ___ և ____ -ին ընդունված թիվ ___ որոշումների, ճանաչվել է բացառիկ՝ գերակա հանրային շահ և ենթակա է օտարման: ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ հատակագիծը կցվում է ՊԱՅՄԱՆԱԳՐԻՆ և հանդիսանում է նրա անբաժանելի մասը:

1.3. **ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԻՆՔ**՝

անուն, ազգանուն/ անվանում	ծննդյան թիվ, անձնագրային տվյալներ/ պետական գրանցման վկայական	իրավունքի տեսակը

1.4. **ՍԵՓԱԿԱՆԱՏԵՐ**՝ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ կետ 1.3- ում որպես սեփականության իրավունք ունեցող նշված ԱՆՁԻՆՔ բոլորը միասին

1.5. **ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԱՆՑ ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐ**

ստացողի անուն, ազգանուն/ անվանում	բանկային վավերապայմաններ	ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆ համապատասխան բաժին
		դրամ
		դրամ

1.6. **ՁԵՌՔ ԲԵՐՈՂ**՝ Հայաստանի Հանրապետություն

1.7. **ՓՈԽՀԱՏՈՒՑՈՒՄ**՝ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ օտարման դիմաց ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԱՆՑ տրվող համարժեք փոխհատուցում: ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆ ընդհանուր գումարը կազմում է _____ դրամ:

1.8. **ՊԱՐՏՔԵՐ**՝ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ կնքման օրվա դրությամբ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ կապակցությամբ բոլոր չկատարված հարկային և էլեկտրամատակարարման, հեռախոսակապի, ջրի, կոյուղու, կոմունալ և այլ ծառայությունների գծով պարտավորությունների գումարը, որը

կազմում է.

- հարկերի գծով՝ ___ դրամ,
- կոմունալ և այլ վճարումների գծով՝ ___ դրամ,
- ԸՆԴԱՄԵՆԸ՝ ___ դրամ:

2. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ առարկան

2.1. ՍԵՓԱԿԱՆԱՏԵՐԸ փոխանցում է ՁԵՌՔ ԲԵՐՈՂԻՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ առարկա հանդիսացող ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ նկատմամբ սեփականության իրավունքը:

2.2. ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԱՆՑ իրավունքները դադարում են ՊԱՅՄԱՆԱԳԻՐՆ անշարժ գույքի գրանցման պետական լիազորված մարմնում գրանցելու պահից:

2.3. ՁԵՌՔ ԲԵՐՈՂԸ ընդունում է ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԸ որպես սեփականություն և պարտավորվում է վճարել ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԱՆՑ նրանց իրավունքների դադարման դիմաց ՊԱՅՄԱՆԱԳՐԻ կետ 1.7-ում նշված ՓՈԽՀԱՏՈՒՑՈՒՄԸ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ նշված պայմաններով, կարգով և ժամկետներում:

2.4. ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԻՆՔ պարտավորվում են ազատել այն ՊԱՅՄԱՆԱԳՐԻ կետ 5.1-ուն նշված վճարումը կատարելուց ___ օրվա ժամկետում, իսկ ՍԵՓԱԿԱՆԱՏԵՐԸ պարտավորվում է պայմանագրից ծագող իրավունքների պետական գրանցումից հետո ՁԵՌՔ ԲԵՐՈՂԻ պահանջով ___ օրյա ժամկետում հանձնման-ընդունման ակտով հանձնել ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԸ ՁԵՌՔ ԲԵՐՈՂԻՆ:

3. ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ նկարագրությունը

3.1. ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԸ սեփականության իրավունքով պատկանում է ՍԵՓԱԿԱՆԱՏԻՐՈՋԸ, ինչը հաստատվում է ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի կողմից տրված ՊԱՅՄԱՆԱԳՐԻ կետ 1.2-ում նշված սեփականության իրավունքի գրանցման վկայական(ներ)ով:

3.2. ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ հատակագիծը կցվում է ՊԱՅՄԱՆԱԳՐԻՆ և հանդիսանում է նրա անբաժանելի մասը:

4. ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԱՆՑ երաշխիքները

4.1. Սույնով ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԻՆՔ հաստատում են, որ համաձայն են ՊԱՅՄԱՆԱԳՐԻ կետ 1.8-ում նշված ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆ գումարի հետ ինչպես նաև իրենց հասանելի ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆ համապատասխան բաժնի հետ և չունեն դրանց նկատմամբ որևէ առարկություններ կամ բողոքներ:

4.2. ՍԵՓԱԿԱՆԱՏԵՐԸ հաստատում է, որ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ կետ 1.3-ում նշված անձանցից բացի այլ անձինք չունեն որևէ իրավունքներ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ նկատմամբ և, որ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ կնքման համար որևէ այլ անձանց համաձայնություն չի պահանջվում:

4.3. ՍԵՓԱԿԱՆԱՏԵՐԸ հաստատում է, որ, ՊԱՅՄԱՆԱԳՐԻ կետ 1.8-ում նշված ՊԱՐՏՔԵՐԻՑ բացի չկան որևէ այլ չկատարված հարկային և այլ տեսակի պարտավորություններ՝ կապված ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ տիրապետման կամ օգտագործման հետ:

4.4. ՍԵՓԱԿԱՆԱՏԵՐԸ երաշխավորում է, որ՝

- ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԸ վաճառված և նվիրված չէ, կալանքի տակ չի գտնվում, ազատ է երրորդ անձանց պահանջներից և այլ տեսակի իրավական ծանրաբեռնվածություններից,
- բռնագանձում կամ բռնագրավում տարածված չէ:

5. ՓՈԽՀԱՏՈՒՑՈՒՄԸ և վճարման կարգը

5.1. ՓՈԽՀԱՏՈՒՑՈՒՄԸ ներառում է ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ օտարման հետ կապված ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԱՆՑ հասանելիք բոլոր տեսակի հատուցումներն ամբողջությամբ:

5.2. ՁԵՌՔ ԲԵՐՈՂԸ պարտավորվում է վճարել ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԱՆՑ Պայմանագրի կետ 1.7-ում նշված ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆ գումարը՝ նվազեցնելով այն կետ 4.2-ում նշված ՊԱՐՏՔԵՐԻ գումարի չափով ՊԱՅՄԱՆԱԳՐԻ կնքման օրվանից __ բանկային օրվա ընթացքում ՊԱՅՄԱՆԱԳՐԻ կետ 1.2.-ում նշված բանկային հաշիվներին, նշված համապատասխան բաժիններով:

6. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ կնքման հետ կապված ծախսերը

6.1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ կնքման, նոտարական վավերացման և գրանցման հետ կապված բոլոր ծախսերը կատարվում են ՁԵՌՔ ԲԵՐՈՂԻ հաշվին:

7. Կողմերի պատասխանատվությունը

7.1. ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԻՆՔ պատասխանատվություն են կրում իրենց կողմից ՊԱՅՄԱՆԱԳՐԻ բաժին 4-ում տրված կեղծ երաշխիքների համար, և յուրաքանչյուր ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁ պարտավորվում է փոխհատուցել ՁԵՌՔԲԵՐՈՂԻՆ բոլոր տեսակի ծախսերը և վնասները, որը կկրի ՁԵՌՔ ԲԵՈՂԸ տվյալ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԻ կողմից կեղծ երաշխիքներ տալու հետևանքով:

7.2. Կողմերը պատասխանատվություն են կրում իրենց պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար օրենքով սահմանված կարգով:

8. Վեճերի լուծումը և օրենքի ընտրությունը

8.1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ առնչությամբ կողմերի միջև ծագած բոլոր վեճերը կարգավորվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

8.2. ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ մեկնաբանվում է կնքման պահին ՀՀ գործող օրենսդրությանը համաձայն:

9. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ գործողության սահմանները և իրավական հիմքը

9.1. ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ենթակա է նոտարական վավերացման և իրավունքների փոխանցման առումով ուժի մեջ է մտնում ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի պետական կադաստրի կոմիտեում գրանցելու պահից: ՊԱՅՄԱՆԱԳՐԻ այլ դրույթներն ուժի մեջ են մտնում ստորագրման պահից:

9.2. ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ կազմված է __ (___) օրինակից, որոնցից մեկական տրվում է յուրաքանչյուր ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԻՆ, ՁԵՌՔ ԲԵՐՈՂԻՆ, պետական նոտարական գրասենյակին և ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի պետական կադաստրի կոմիտեի համապատասխան ստորաբաժանմանը:

10. Կողմերի վավերապայմանները

_____

_____

_____

11. Կողմերի ստորագրությունները

11.1. ՁԵՌՔ ԲԵՐՈՂԻ անունից՝

«Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցք ներդրումային ծրագիր իրականացնող կազմակերպություն» պետական ոչ առևտրային կազմակերպություն, որը գործում է ՁԵՌՔ ԲԵՐՈՂԻ անունից համաձայն «Հասարակության և պետության կարիքների համար սեփականության օտարման մասին» օրենքի և ՀՀ կառավարության կողմից 27 մայիսի 2010 թվականին ընդունված N 931-Ն որոշման: «Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցք ներդրումային ծրագիր իրականացնող կազմակերպություն» պետական ոչ առևտրային կազմակերպության անունից համաձայն լիազորագրի հանդես է գալիս _____-ը

_____

ստորագրություն

11.2. ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԻՆՔ՝

_____ /,որի անունից համաձայն լիազորագրի/կանոնադրության/օրենքի հանդես է գալիս _____-ը/

_____

ստորագրություն

_____ /,որի անունից համաձայն լիազորագրի/կանոնադրության/օրենքի հանդես է գալիս _____-ը /

_____

ստորագրություն

Հավելված N 2
ՀՀ կառավարության 2011 թ.
հոկտեմբերի 6-ի նիստի N 39
արձանագրային որոշման

Հ Ա Մ Ա Ձ Ա Յ Ա Ն Ա Գ Ի Ր

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԵՎ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՕՏԱՐՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿՎԱԾ ԱՆՁԱՆՑ ԼՐԱՑՈՒՑԻՉ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆ ՄԱՍԻՆ

_____ կնքման վայրը

_____ կնքման ամսաթիվը

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության և Ասիական զարգացման բանկի միջև կնքված վարկային համաձայնագրի ____ և ՀՀ կառավարության կողմից ____ -ին ընդունված թիվ ___, ____ -ին ընդունված թիվ ___ և ____ -ին ընդունված թիվ ___ որոշումներով կողմերը կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

1. Սահմանումներ

1.1. ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔ՝ անշարժ գույքը, որը կազմված է _____ մարզ, գ._____-ում գտնվող ___ ք.մ. ընդհանուր մակերեսով հողատարածքի (կադաստրային կոդ _____) մասը կազմող ____ք.մ մակերեսով հողակտորը և նույն հողակտորի վրա գտնվող _____-ից, և որի նկատմամբ համաձայն ՀՀ կառավարության կողմից ____ -ին ընդունված թիվ ___, ____ -ին ընդունված թիվ ___ և ____ -ին ընդունված թիվ ___ որոշումների ճանաչվել է բացառիկ՝ գերակա հանրային շահ _____ և ենթակա է օտարման:

1.2. ԱԵԱ՝ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ օտարման կապակցությամբ համաձայն ՀՀ կառավարության կողմից ____ -ին ընդունված թիվ ___ որոշման ազդեցության ենթարկված անձինք, որոնք նշված են սույն կետում՝

անուն, ազգանուն/ անվանում	ծննդյան թիվ, անձնագրային տվյալներ/ պետական գրանցման վկայական	ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ նկատմամբ իրավունքի տեսակը
		իրավական կարգավիճակ ստանալու ենթակա հողօգտագործող

1.3. **ԱԵԱ-ների ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐ**

ստացողի անուն, ազգանուն/ անվանում	բանկային վավերապայմաններ	ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆ համապատասխան բաժին
		դրամ
		դրամ

1.4. **ՁԵՌՔ ԲԵՐՈՂ**՝ Հայաստանի Հանրապետություն

1.5. **ՓՈԽՀԱՏՈՒՑՈՒՄ՝** ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ օտարման կապակցությամբ ԱԵԱ-ին համաձայն ՀՀ կառավարության ____ որոշման տրվող լրացուցիչ փոխհատուցում: ՓՈԽՀԱՏՈՒՑՈՒՄՆ ներառում է հատուցում հետևյալի համար.

.	հողօգտագործում	դրամ
.	Բերք	դրամ
.	Ծառեր	դրամ
.	Ձեռնարկատեր/անհատ ձեռներեց	դրամ
.	Մշտական աշխատողներ/աշխատակիցներ.	դրամ
	Օժանդակություն էական ազդեցությունների դեպքում	դրամ

.		
.	Օժանդակություն վերաբնակեցման դեպքում	դրամ
.	Օժանդակություն խոցելի անձանց	դրամ
.	Ժամանակավոր ազդեցություն	դրամ
.	ՀՕՏ չնախատեսված ազդեցություններ, եթե այդպիսիք լինեն	դրամ

ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆ ընդհանուր գումարը կազմում է _____ դրամ:

2. ՓՈԽՀԱՏՈՒՑՈՒՄ

2.1. Սույնով ՁԵՌՔ ԲԵՐՈՂԸ պարտավորվում է վճարել ԱԵԱ-ին ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆ գումարը, սույն համաձայնագրի կետ 1.3-ում նշված բանկային հաշիվներին՝ նշված համապատասխան բաժիններով՝ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ վերաբերյալ համապատասխան ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԵՎ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՕՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ պայմանագիրը կնքելու կամ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ սեփականությունը ՁԵՌՔ ԲԵՐՈՂԻՆ անցնելու մասին համապատասխան դատական որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից __ բանկային օրվա ընթացքում:

2.2. Սույնով ԱԵԱ-ն հաստատում է, որ ՓՈԽՀԱՏՈՒՑՈՒՄԸ ներառում է ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ օտարման հետ կապված ԱԵԱ-ին հասանելիք բոլոր տեսակի հատուցումները ամբողջությամբ և, որ համաձայն է սույն համաձայանագրի կետ 1.5-ում նշված ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆ գումարի հետ և չունի դրա նկատմամբ որևէ առարկություններ կամ բողոքներ:

2.3. ԱԵԱ-ն հաստատում է, որ սույն համաձայնագրի կետ 1.3-ում նշված ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆ գումարի ստացողները և նրանց բաժինները որոշված են իր կողմից:

3. ԱԵԱ-ի երաշիքները

3.1. ԱԵԱ-ն երաշխավորում է, որ սույն համաձայնագրի կետ 1.3-ում նշված անձանցից բացի չկան որևէ այլ անձինք որորնք ունեն ՓՈԽՀԱՏՈՒՑՈՒՄԸ կան դրա մի մասը ստանալու իրավունք:

3.2. ԱԵԱ-ն պատասխանատվություն է կրում իր կողմից տրված կեղծ երաշխիքների համար և պարտավորվոում է փոխհատուցել ՁԵՌՔ ԲԵՐՈՂԻՆ բոլոր տեսակի ծախսերը և վնասները, որը կկրի ՁԵՌՔ ԲԵՐՈՂԸ ԱԵԱ-ի կողմից կեցծ երաշխիքներ տալու հետևանքով:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ գործողության սահմանները և իրավական հիմքը

4.1. Սույն համաձայնագիրը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

4.2. Սույն համաձայնագիրը կազմված է __ (___) օրինակից, որոնցից մեկական տրվում է յուրաքանչյուր ԱԵԱ-ին և ՁԵՌՔ ԲԵՐՈՂԻ ԿՈՂՄԻՑ ԼԻԱԶՈՐՎԱԾ ԱՆՁԻՆ:

5. Կողմերի վավերապայմանները

_____

_____

_____

6. Կողմերի ստորագրությունները

6. Կողմերի ստորագրությունները

6.1. ՁԵՌՔ ԲԵՐՈՂԻ անունից՝

«Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցք ներդրումային ծրագիր իրականացնող կազմակերպություն» պետական ոչ առևտրային կազմակերպություն, որը գործում է ՁԵՌՔ ԲԵՐՈՂԻ անունից համաձայն «Հասարակության և պետության կարիքների համար սեփականության օտարման մասին» օրենքի և ՀՀ կառավարության կողմից 27 մայիսի 2010 թվականին ընդունված N 931-Ն որոշման: «Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցք ներդրումային ծրագիր իրականացնող կազմակերպություն» պետական ոչ առևտրային կազմակերպության անունից համաձայն լիազորագրի հանդես է գալիս _____-ը

_____
ստորագրություն

6.2. ԱԵԱ՝

_____ /,որի անունից համաձայն լիազորագրի/կանոնադրության/օրենքի հանդես է գալիս _____-ը/

_____
ստորագրություն

_____ /,որի անունից համաձայն լիազորագրի/կանոնադրության/օրենքի անդես է գալիս _____-ը /

_____
ստորագրություն